Վարչության պետը

1. Ապահովում է մարզպետի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցությունը.
2. Ապահովում է պետության կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի (այսուհետ՝ Մարզ) տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը.
3. Ապահովումէ համայնքների ղեկավարների և ավագանու գործունեության հրապարակա յնությունը.
4. Ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի համապատասխանության ուսումնասիրությունը ՀՀ օրենսդրության պահանջներին.
5. Ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման աշխատանքները.
6. Ապահովում է միջհամայնքային միավորումների ձևավորման և համայնքների խոշորացման կազմակերպման աշխատանքները.
7. Ապահովում է Մարզի համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման աշխատանքներին աջակցության ցուցաբերումը.
8. Ապահովում է Մարզի համայնքապետարանների աշխատակազմերի վերակազմակերպման, կառուցվածքային փոփոխությունների և լուծարման ժամանակ համայնքային ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ լիազորված պետական մարմին փոփոխությունների մասով տեղեկատվություններ ներկայացնելու աշխատանքները.
9. Ապահովում է համայնքային ծառայության պաշտոնների գրանցամատյանի վարման, համայնքային ծառայողների վերապատրաստման խմբերի կազմավորման, թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների և ատեստավորումների նշանակման օրերի հաշվառման, արդյունքների ամփոփման և լիազորված պետական մարմին համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող և պաշտոնից ազատված անձանց վերաբերյալ տեղեկությունների տրամադրման աշխատանքները.
10. Ապահովում է Մարզպետի, պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումն երի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցու թյունը.
11. Ապահովում է Վարչության մասնակցությունը հանրապետական ծրագրերով նախատեսված, օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը.
12. Ապահովում է Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակներում Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները.

13. Ապահովում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման աշխատանքները.